# ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

(Մի համառօտ հայեացք նորա կեանքի եւ գործունէութեան վերայ)

---

Ա. Մ. ՎՐՈՑՐԻ

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա.

Ադամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը.—Նորա կեանքը ծանօթների և բարեկամների շրջանում.—Իւր ընկերների հետ.—Մի քանի խօսք մինչև այժմ տպուած Նորա կենսագրութիւնների մասին։

Բ.

Պ. Ադամեան Կ. Պոլսում.—Նոր-Նախիջևանում.—Կովկասում և Նորա ունեցած ներգործութիւնը Ադամեանի խաղի նկատմամբ.—Ադամեան Ռուսաստանում.—Վերջին այցելութիւն 'ի Պոլիս և Զմիւռնիա.—Հիւանդութիւն և վերջին օրեր։

Գ.

Պ. Ադամեանի հայեացքը դերասանական արուեստի մասին.—Իւր գլխաւոր դերերը.—Ի՞նչ արեց Ադամեան հայ բեմի համար.—Ադամեան իբր բանաստեղծ և նկարիչ.—Ի՞նչ էր սիրում Ադամեան.—Մեր մասնաւոր կարծիքը Նորա մասին ընդհանրապէս։

---

Ձեռք առնելով գրիչ, մենք կատարելապէս զգում ենք դրուելու նիւթի լրջութիւնը և թատրոնական ապագայ տարեգրի համար տրա ունենալիք նշանակութիւնը։ Մենք կրկնում ենք, կատարելապէս կշռած ենք այն պատասխանատուութեան ծանրութիւնը, որ սորանով առնում ենք մեր

*վերայ՝ ներկայի և ապագայի առաջ, և այդ պատճառով վերին աստիճանի զգուշ ենք վարուելու մեր լայտնելիք կարծիքներում։ Մենք չէինք համարձակուիլ կարծիքներ լայտնել, եթէ խորապէս համոզուած չը լինէինք մեր ասելիքներին, և չը սխալուելու համար մեր զգուշութեան գլխաւոր պատճառը այն է, որ Պետրոս Ադամեանին մենք դասում ենք այն մեծ հանճարների կարգին՝ որ դարերը հազիւ կը ծնանեն։*

---

## Ա.

*Ադամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը։—Նորա կեանքը ծանօթների և բարեկամների շրջանում։—Նրա ընկերների հետ։—Մի քանի խօսք մինչև այժմ տպուած Նորա կենսագրութիւնների մասին։*

*Ադամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը։—Ընթերցողը կարող է բոլորովին վստահ լինել, որ մենք զանազան գրաւոր կամ բերանացի ցուցմունքների չենք գիմում Ադամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը նկարագրելիս, այլ գրի ենք առնում այն բոլորը, որ նկատած ենք Նորա մէջ, մեր հնգամեայ բարեկամութեան և ընկերութեան միջոցին։ Մենք առանց նախապաշարման հետևել ենք Նորա բնաւորութեան զանազան երևոյթներին, Նորան ուսումնասիրելու համար. որովհետև առանց ուսումնասիրելու Նորա բնաւորութիւնը ոչ թէ Նորա հետ մշտական ընկերակցութիւն այլ նոյն իսկ բարեկամութիւն դժուար էր անել։ Այս ասում ենք Նորա համար, որովհետև նա այնքան տարօրինակ բնաւորութեան տէր մարդ էր, որքան և արտաքոյ կարգի տաղանդաւոր դերասան։ Կատաղի բարկութեան հետ գառան հեզութիւնը, սէգ հպարտութեան հետ վերին աստիճանի խոնարհութիւնը, անհաչիւ շռայլութեան հետ կոպէկի հաչիւները, օձի խորամանկութեան հետ աղաւնու միամտութիւնը, որոնց շատ երկար կարելի է թուել, այս բոլոր բնաւորական հակասութիւնները միացած էին Նորանում։ Նա փոփոխամիտ էր այնչափ՝ որչափ և հաստատամիտ։ Շատ լաճախ կարելի էր տեսնել, որ այսօրուայ սիրածը էգուց ատում է, այսօրուայ համակրածին էգուց հակակրում, բայց կը լինէին և դէպքեր, որ հակառակ իւր վերայ եղած ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւնների, Նորան չէր կարելի ոչ մի կերպով շեղել իւր համոզմունքից կամ մտադրութիւնից։ Շատ անգամ պատահում էին դէպքեր որ նա հաւատացածին հաւատում էր անպայման, իսկ չը վստահածին չէր հաւատում, թէև շատ փաստեր և ապացոյցներ լինէին իւր առաջ վստահելու կամ հաւատալու։ Բայց նա սիրում էր առհասարակ իւր մօտիկ շրջապատողներին հաւատալ, նա սիրում էր մարդկային բնաւորութեան ոչ թէ լոռի այլ բացարձակապէս լաւ կողմերը տեսնել, և Նորա այս բնաւորութիւնն էր պատճառ որ*

Նա շատ լաճախ գործիք էր դառնում իւր չրջապատողների ձեռքին, որոնք ի չարն էին գործադրում նորա բարեմտութիւնը։ Նա չէր սիրում երբէք առանց ընկերոջ կամ բարեկամի մնալ. նա կը սիրէր ընկեր ունենալ չըրջագայութեան, սեղանի և ճանապարհորդութեան ժամանակ. այս զգացումը նորանում այն աստիճան զարգացած էր որ ճանապարհորդութեան ժամանակ երբ իրան դուրեկան մէկին պատահէր նա երկար կը թախանձէր որ առժամանակ թողնէ իւր պարապմունքը և անընպատակ ճանապարհորդէ իրան հետ, որ բնականաբար ոչ ոք լանձն չէր առնէր։ Այդ բնութիւնից տաղանդով և ձիրքերով օժաւած արուեստագէտը իւր պահանջներով շատ անգամ կը դառնար իբրև մի փոքրիկ մանուկ՝ որ կը պահանջէ դողլի մէջ ցոլացող լուսինը, որին այդ անկարելի պահանջից լետ կանգնեցնելու համար պէտք է անպատճառ չոլել կամ խաբել։

Իւր վառ երևակայութեան պատճառաւ շատ աննչան դէպքեր կը մեծանային, կը կաղմաւորվէին և իրան երկար մտատանջութիւնների և հոգեկան տանջանքների պատճառ կը դառնային։ Նա լռիկ կը հեծէր, կը դանդատուէր բաղդից և կեանքից, իւր փառքը իրան դժբաղդութիւն կը համարէր իսկ դժինիները փուչ։ Երբ Ֆիխիում 1886 թ. առաջին անգամ ներկայացրեց Օթէլլո, ներկայացումը վերջանալուց լետոյ հիացած ամբոխը խռնւած բեմի դռների առաջ չէր գիտեր ինչպէս լայտնել իւր հիացումը, այն միջոցին Ադամեան, մի քանի րոպէ առաջուայ այդ ահարկու Մաւրիտանացին իւր առանձնասենեակում ընկած սեղանի վերայ լալիս էր և հեծկլտում։ Ի՞նչ էր պատճառը... ոչ ոք դիտէր, բայց ինքը առարկում էր թէ երբէք հանգիստ չունէր։

Նա շատ դիւրագրգիռ էր, այնքան չուտ բորբոքւում էր, որքան և չուտ հանդում. բայց շատ անգամ կը լինէին դէպքեր, չնչին, անկարևոր պատահմունքներ, որոնց վերայ նա օրերով կը մտածէր և կը խոկար։ Ահա ալսպիսի դէպքերում նա իսկոյն կը լայտնէր մտիկ ծանօթներին իւր միտքը զբաղեցնող խնդիրը և սիրտը հանդարտեցնելու համար կը սպասէր նոցանից սփոփանք և մխիթարանք։

Նւայի աղջիկները մասնաւոր համակրանք էին զգում դէպի նա, որին պատասխանում էր մեծ արուեստագէտը ոչ անտարբեր։

Իսկ թէ ինչպէս էր նա վարում իւր թշնամիների կամ իրան վնասել ջանացողների դէմ, քաղում ենք իւր մի բարեկամին 1887 թ. սեպտ. 9-ին Թէոդոսիայից գրած նամակից հետևեալը. «Ս. ին ընդհակառակն խնդրեմ որ ներէք և մինչև անգամ եթէ կարելի է օգնէք իրեն... ամեն մարդ իրաւունք ունի իւր ապրուստը ճարելու. և եթէ դորա համար գործածած միջոցները կոպիտ կամ անվայել լինեն, պէտք է նորա առած դատապարտութիւնը աչքի առաջ ունենալով նոյնպէս և կեանքին հանգամանքները՝ ներել նորան, և եթէ կարելի է լորդորելով ուղղել։ Ի՞նչ արած սիրելիս, այժմ ես առաւել հաստատուած եմ այս սկզբունքին մէջ, ներել

բոլորին հանգամանքները քննելով, ոչ ոք լիովին իւր մեղքին մեղաւոր չէ. դաղղիացի մի փիլիսոփայ ասում է. «tout comprendre c'est tout pardonner», ամենայն ինչ հասկանալով ամենին ներել, մէկին վնասելով միւսին չ'օգնել»։

* * *

Նորա կեանքը ծանօթների և բարեկամների չրջանում.—Երևակայել Ադամեանից աւելի մի ընկերական մարդ, բնութեան ալդքան, շնորհքներով օժտուած, շատ դժուար է։ Ընկերական չրջանում նորա հետ նստել, խօսել կատակել արժէր։ Նա սրախօս էր, կատակող և սիրում էր երկար խօսել երբ նիւթն էր գեղարուեստը և սպիրիտիզմը, որին հոգւով մարմնով վերջերս անձնատուր էր եղած։ Ցաճախ խօսում էր նաև բանաստեղծութեան, աստեղագիտութեան և բժշկութեան մասին։ Նա սիրում էր այն անձանց որոնք ո և է գաղափար կամ ճաչակ ունէին վերուլուծելների մասին։ Ուրիշ ինչ բանի վերայ որ խօսէին, նա ակամայից կը լսէր բայց բոլորովին ուշադրութիւն չէր դարձնէր։ Իւր ծանօթների և բարեկամների համար շատ հաճելի էին այն ժամերը որը կ'անցկացնէին Ադամեանի տեսակցութիւնը վայելելով։ Միայնակութիւնը նորա համար անտանելի էր։ Նա կընդունէր և սէր ցոյց կուտար այն ամենքին որոնք կ'ալցելէին իրան, առանց խտրութեան վիճակի և կոչման։ Բայց իւր տեսնուած մարդկանց բոլորին չէր կարելի անուանել բարեկամ, նա բոլորի հետ անկեղծ չէր։ Մեր հնդամեայ ընկերակցութեան միջոցին ես մի անձի տեսայ միայն որին Ադամեան կոչում էր իւր միակ բարեկամ և որին անպայման հաւատում էր։ Դա Աղէքսանդր Ստեփանեանցն է որի անունն ու վիշատակ պահից մինչև մահուան անկողնում.

* * *

Իւր ընկերների հետ.—Ադամեան իբր դերասան, իւր կենաց օրերի մեծ մասը, արհեստի բերմամբ անց էր կացնում իւր ընկերների հետ։ Նա մի առանձին թեթևութիւն էր զգում երբ բարձր beau mond-ից իջնում էր իւր ընկերների չրջանը, որոնց մէջ նա պէտք չունէր ձևակերպութիւնների։ Ադամեան սիրում էր իւր ընկերների հետ խօսել գլխաւորապէս դերասանական արուեստի մասին։ Նա որ չարունակ կարդում էր թատրոնական գործի վերաբերեալ ամեն նորագոյն դրուածք, կուղէր մասնակից անել իւր ընկերներին ևս իրտ կարդացածին։ Բայց նա ստիպուած էր շատ անդամ դառնութեամբ լսել որ իւր դերասան ընկերների մէջ այն աստիճան անդարդացածներ կային, որ ոչ թէ դեղարուեստի մասին մի ընդունուած ճշմարտութիւն հասկանալու, այլ մի ընտիր նախադասութիւն

անգամ ըմբռնելու և բացատրելու շատ անդամ անկարող կը գտնուէին։ Թող որ չատերը դեղարուեստի և իրանց կատարած պաշտօնի նկատմամբ տարրական տեղեկութիւններից անգամ զուրկ էին։ Նա չարունակ կը յորդորէր իւր ընկերներին ճաշակ զարգացնող և դեղարուեստի վերաբերեալ գրուածքներ կարդալ։

Ադամեան իւր ընկերակից դերասանների մեծի և փոքրի հետ հաւասար սիրով և մտերմութեամբ կը վարուէր։

Շատ լսենք։ երբ ո և է պատճառով նեղանար իւր ընկերներից մէկի վերայ, և ապա զգար իւր սխալանքը, ամենայն խոնարհութեամբ կը մօտենար, կը խոստովանուէր իւր սխալած լինելը, ներումն կը խնդրէր, միով բանիւ այդ վիրաւորուած սիրտը սիրաշահելու համար ոչ մի միջոց չէր խնայէր։

*
* *

Մի քանի խօսք մինչև այժմ տպուած նորա կենսագրութիւնների մասին։—Զը նայելով որ թէ մի քանի ռուս թերթեր, ինչպէս և հայերէն հրատարակութիւններ, միևնոյն ժամանակ «քսան և հնգամեայ բեմական գործունէութիւն Պ. Հ. Ադամեանի» տետրակը հրատարակել են հռչակաւոր արուեստագէտի կենսագրութիւնները, բայց առանց բացառութեան բոլորն էլ շատ համառօտ են և լի սխալ ու անճիշդ տեղեկութիւններով։ Ադամեան շատ անփոյթ է եղած իւր ճիշդ ինքնակենսագրութիւնը կազմելու և եղածների պակասութիւնները ու սխալները ուղղելու։ Հետևաբար կարելի է բացարձակապէս ասել թէ՝ Ադամեան մինչ օրս կենսագրութիւն չունի։ Ադամեանի ճշդրիտ և մանրամասն կենսագրութիւնը անհրաժեշտ է։ Նա սովորական տաղանդներից չէ որ ինքն իրան ծաղկի, ուռճանալ և անվիշտակ անցնի մեր միջից։ Նորա կենսագրութիւնը անհրաժեշտ է և իբր գասագիրք կարող է ծառայել նրանց՝ որոնք կամենում են բեմին ծառայել։ Ադամեանի մանրամասն կենսագրութիւնը անհրաժեշտ է հայ թատրոնի ապագայ տարեգրին, որովհետև պատմագրողը հասնելով մինչև Ադամեանի բեմի վերայ հանդէս գալը՝ ակամայ կանգ պիտի առնէ, նա երկար պիտի խօսի թատրոնական այն հսկայ վերանորոգչի մասին, որ լեղափոխեց մինչև այն ժամանակ հայ բեմի վերայ տիրող անոյշ ուղղութիւնը։ Ադամեանի կենսագրութիւնը անհրաժեշտ է և այդ պէտք է գրի իւր ծննդավայրում, Կ. Պոլսում, նորա աղգականներից, ընկերներից, միով բանիւ նրան մօտիկ շրջապատողներից։ Նորա կեանքի և գործունէութեան սկզբնաւորութեան վերաբերեալ բոլոր նիւթերը հաւաքելով վերաստուգելուց յետոյ՝ հրատարակութեան տալով։ Այն ժամանակ կարող ենք հաւատացած լինել որ Ադամեանի կենսագրութիւնը գրուած է։

Նորա տպւած կենսագրութիւնները քննադատել ամբողջապէս՝ դա մեզ չատ հեռու կը տանէր. մենք կը բաւականանանք մի երկու տեղեր միայն լիշելով, որոնց անճշդութիւնը ակներև է։ Ա. Ադամեան երբէք չէր կարող զինուորական ծառայութեան մէջ մտած լինել Ֆաճկաստանում, քանի որ զինուորական ծառայութեան գոնները փակ են քրիստոնէից համար. (զինուորական բարձրագոյն սպայակոյտի գերմանացի փաշաները վերջին տարիներս կոչեցան պաշտօնի բացառապէս, պահելով իրանց գերմանական հպատակութիւնը)։ Քրիստոնեաները միմիայն կարող են լինել զինուորական բժիշկ, վիրաբոյժ կամ դեղագործներ, բայց Ադամեանի կենսագիրները լիշում են միմիայն զինուորական ծառայութեան մասին՝ որ սխալ է։ Բացի դրանից Ադամեանի նման երկչոտ, թոյլ և վառ երևակայութեան տէր մարդը դժուար թէ լանձնառու լինէր զինուորական ասպարէզում իւր ոյժերը փորձելու [1]). Բ. Ադամեանի կենսագրութեան մէջ հպիւ լիշւած է իւր գլխաւոր քաջալերողի և մեկենասի հանդ. Յակոբ Բէյ Պալեանի անունը։ Այդ անունը ոսկի օղակներով հիւսուած է Ադամեանի առաջիճանարար զարգանալու պատմութեան հետ։ Նա տեսնելով Ադամեանի խաղը, Զրաղանի [2]) այդ հանճարաւոր ճարտարապետը, իմացաւ որ իւր առաջ կանգնած է եզակի տաղանդներից մինը, եզակի ալնպէս՝ ինչպէս ինքը։

Պէտք է Կ. Պոլսում բաւականի ապրած լինել դղալու համար թէ ինչ կամքի ոյժ և դեղարուեստի սէր պէտք է ունենալ որ մի բէյ, արքունի գլխաւոր ճարտարապետ, թատրոնական խմբի գլուխ կանգնելու չափ խոնարհի։ Նա ոչ միայն այդ խմբին հովանաւորեց, այլ և կառուցեց Օրթա գիւղի բարեսէր ընկերութեան գեղեցիկ թատրոնը։ Նորա մասին ի միջի այլոց պատմում են հետևեալը։ Այդ դեղարուեստական բարձր ճաշակի տէր անձը, այն աստիճան գրաւեցաւ Ադամեանի գեղարուեստական ընդունակութիւններով, որ գիշեր ցերեկ իւր մօտ էր պահում։ Ադամեան անհաչիւ միտում էր. առաւօտեան դարթնում և տեսնում էր որ աներևոյթ մի ձեռք լցրել է իւր գրպանը ոսկի դրամներով։ Յաջորդ գիշեր դարձեալ դատարկ էր գրպանը, բայց նոյն աներևոյթ ձեռքը նորից էր լցրած. և

---

[1]) Հանգուցեալ հռչակաւոր երգիչաքան Յ. Պարոնեան, Կ. Պոլսում Ադամեանի ներկայացրած «Թէլլօ»-ից յետոյ գրում էր իւր «Ալիկարում»։

«Ադամեան մ՚ունինք, որ իւր հաշուոյն համար կը մեռնի և կը վերակենդանի ամեն կիւրակէ։ Ան ալ պզտիկ ապացոյց մ՚է թէ Հայերն ունին դիւցազնութիւն... Թատերաբեմի վրայ, թէ չեն ալխենար մահէն ևթէ նախապէս ապահովութիւն աբեր իրենց թէ քանի մը վայրկեանէ յետոյ նորէն պիտի կենդանանան։ Ահա բարոյականն զոր կը քաղեմ դիւցազնական ներկայացումներէն։

«Թատերաբեմէն դուրս Ադամեանն ալ անշուշտ մեղ նման սովորական մահկանացուներէն է որ վաւերակ մ՚ իսկ մորթելու կը վախնայ, իսկ Թատերաբեմին վրայ առիւծ կը դառնայ։

[2]) Հրաշակերտ պալատ Բոսֆորի ափում։

այպէս լաջորդաբար։ Ց. Պալեանի իշխանական ձեռքն էր այդ։ Գ. Ադամեանի բեմական ընդունակութիւնների զարգանալուն պատճառ եղան երկու տաղանդաւոր դերասաններ որ այն ժամանակ լալտնի էին իբր լաւ դրամատիք դերեր կատարողներ. դոքա են Էքշեան և Թ. Ֆասուլեանեան։ Այս մասին մեզ թէ պակասում են մանրամասնութիւններ, բայց այսքանը կասենք որ ինչպէս պողվատը սրում է դանակը, այնպէս էլ տաղանդը ոգևորում է ընդունակութիւններին (այսինքն մի տաղանդաւոր դերասան ոգևորում է նրանց որոնք օժտուած են ընդունակութիւններով)։ Մենք գիտենք որ ինչպէս Էքշեան նոյնպէս և Ֆասուլեանեան հին դպրոցի հետևող էին, նմանապէս Ադամեան նոր սկսելիս, բայց նորանց խաղը մեծ ներգործութիւն էր ունենում նորատի դերասանի վերայ, քանի որ նոյն բեմի հրոմն էր տոչորուում։ Անցաւ ժամանակ. Ադամեան աւելի մեծ կոչումն ունէր. նա զգաց հին դպրոցի սխալները. ինքնաշխատութեամբ ուղղեց և կաղմակերպեց իւրը։

Սոքա մշակելի հարուստ նիւթեր են Ադամեանի կենսագրութեան, միևնոյն ժամանակ կարևոր էջեր՝ հայ թատրոնի զարգացման պատմութեան համար։

Բացի Յակոբ Բէյ Պալեանից, արժանահաւատ անձինքներից լսած ենք իբրև Ադամեանին նիւթապէս և բարոյապէս օգնող անձն՝ Պ. Նշան Օտեանի մասին։ Թէև Ադամեանի կենսագիրները լռում են այս անձի նկատմամբ, բայց մեծ արուեստագէտը իւր 1880 թ. Տփխիսում տպած բանաստեղծութիւնների հատորի առաջին տողերում «առ երգք իմ» վերնագրով ոտանաւորի մէջ ասում է.

Զինչ արևգակն ի չողն այդուն
Հոգի ծաղկանց տալ կիսամեռ
Զեր ալ տկար նշխարներուն
Կեանք տուաւ Օտեան պաշտպանս ու տէր։

Հետաքրքիր է իմանալ, Ադամեանի համար այսչափ նշանակութիւն ունեցող մի անձն, նորա կեանքի և գործունէութեան վերայ ինչ ներգործութիւն է ունեցած։

## Բ.

Ադամեան Կ. Պոլսում։—Նոր-Նախիջևանում։—Ադամեան Կովկասում և նորա ունեցած ներգործութիւնը Ադամեանի խաղի նկատմամբ։—Ադամեան Թուսատանում։—Վերջին այցելութիւն ի Կ. Պոլիս և Զմիւռնիա։—Վերջին օրեր։

Ադամեան Կ. Պոլսում։—Նախախնամութիւնը Ադամեանի ծննդավայր ընտրել էր արևելքի չքեղ մայրաքաղաքը։ Նորա մանկութեան և պատանեկութեան առաջին տարիների վերաբերեալ նիւթերը թողնելով ապագայ կենսագրողին՝ մի քանի խօսք միայն կ'ասենք. Նորա նախկին

թատրոնական տարիներու մասին։ Ադամեան 16—17 տարեկան հասակում պէտք է որ բեմ դուրս եկած լինի։ Իւր համակրելի դէմքով, հնչիւն, ղղալուն ձայնով և մաքուր արտասանութեամբ իսկոյն իւր վերայ ուշադրութիւն դարձնել տուց։ Տեսնում էին այս տղայի վերայ մի բան, որ սովորական տեսնուածներից տարբեր էր, նա մի տեսակ մաղնիս ունէր իւր մէջ՝ որ հանդիսականի հայեացքը ակամայ դէպի ինքն էր ձգում։ Մի փոքր ապացոյց ասածիս։ Տարիքիս բոլորովին անհամապատասխան ժամանակից սկսեցի թատրոն լաճախել. ութ տարեկան էի միայն։ Բոսֆորի ասիական ափի Սկիւտար քաղաքամասի Բաղչար-բաչիի թատրոնը, ուր խաղում էր Վարդովեանի փառաւոր խումբը, ուր մասնակցում էր և մեր Ադամեանը, ներկայացնում էր Լօժէն-Սիւի հռչակաւոր «Թափառական հրէան»։ Այդ պիէսան որ իւր մէջ պարունակում է բաղմաթիւ դժւար, ծանր բնաւորական դերեր, այդ պիէսայի ներկայացումը կրկնում ենք մի ապացոյց է այն ժամանակուայ խմբի մեծ և ընտիր ոյժերից կազմած լինելուն. եթէ չեմ սխալւում, խումբը կազմած էր 35—40 գլխաւոր և երկրորդական դերասանուհի և դերասաններից։ Ադամեան այդ խմբում կատարում էր երիտասարդ-սիրահարի դերեր։ Իսկ իմ տեսած «Թափառական հրէայ»-ում կատարում էր Գաբրիէլ միսիոնար-քահանայի դերը։ Պիէսան ունէր իւր մէջ և մի չքեղ կենդանի պատկեր ուր ամբողջ գործող անձինքը ներկայանում էին իրանց դերերի գլխաւոր տեսարաններում։ Այդ կենդանի պատկերում ներկայացում էր ի միջի այլոց Գաբրիէլ քահանայի (կարծեմ) վայրենիներից խաչելը։ Կատաղի ամբոխը Քրիստոսի պաշտօնէի վերայ լարձակւած ուղում է քրիստոսական մահ տալ նրան. իսկ քահանան անձնատուր եղած խաչողներին, իւր երկնագոյն աչքերը երկինք ամբարձած, կարծէք մեծ վարդապետի վերջին ներողական խօսքերն է արտաբերում լռելեայն։ Այդ առաջին անգամն էր որ տեսնում էի մեծ արւեստագէտին. մանուկ հասակում, անկարող դատելու կամ ըմբռնելու, բայց չը գիտեմ ինչ անբերելի սլաքներ, որ մահւան պատրաստուողի աչքերից կ'արձակւէին՝ բերին գամեցին սրտումս այդ գիշերւանից «Ադամեան» անունը։ Ովքեր էին, ինչ խաղացին մնացեալները, որոշ ոչինչ չեմ լիշում, բացի Գաբրիէլ քահանայից և «Ադամեան» անունից։ Նա երկար չը մնաց այդ խմբում։ Նա առհասարակ Կ. Պոլսում մի քանի տարիներ չարունակ չէ խաղացել ալլ՝ ընդհատմամբ։ Շատ անգամ մի փոքրիկ տժգոհութիւն կամ մի չնչին պատճառ առիթ էր լինում որ բեմի այդ անսգիւտ զարդը ձդէ և հեռանայ։ Ի՞նչ էր և ինչ կարող էր դառնալ Ադամեան՝ այդ մասին այն ժամանակուայ լրագրութիւնը համարեա լռում է. միայն գրում էին «գեղեցիկ խաղաց», «աղէկ դերասան է», «աղուոր ձեւեր ունի» և այլն. նորա և առհասարակ թատրոնի մասին քննադատութիւններ սորանից աւելի բան չէին գրում։ Իւր ընկերակից դերասանները անշուշտ կը տեսնէին այդ փոքրիկ մարմնոյն և մեծ դանկին մէջ մի արտաքոյ կարգի տաղանդ կայ թագնուած,

բայց միթէ նախանձը կը թոյլատրէր նոցա այդ բանը խոստովանելու. ընկերական նախանձ՝ որ ընդունակութիւններին բնմից հալածող գլխաւոր տարրն է. Խմբի կառավարչին էլ ձեռնտու չէր Ադամեանի զերազանց ընդունակութիւնների խոստովանութիւնը. Այն ժամանակ ստիպուած պիտի լինէր այդ տղային ամենքից շատ ռոմիկ տալ. Բայց թատրոն լաճախող միջակ զարգացման տէր հասարակութիւնը Ադամեանի մասին տուել էր արդէն իւր վճիռը. «Ադամեան շատ աղուոր կը խաղայ կոր»։

Ադամեան խնդրանքաս ցուցակագրած և ինձ յանձնած էր մեծ թէ փոքր այն բոլոր պիէսաների և դերերի անունները՝ որոնց ներկայացրել է. բայց դժբաղդաբար մի անակնկալ դէպքի բերմամբ կորաւ այդ հետաքրքիր ցանկը. բայց այսքանը կարող ենք ասել թէ նա խաղացած է մեծ և փոքր 300-ից աւելի զանազան դերեր. կոմեդիաներում, դրամաներում և ողբերգութիւններում։

Այս մասում մեր խօսքը վերջացնելուց առաջ աւելորդ չենք համարիր 1867 թ. յունուար 14 թիւ 106 «Ժամանակ» [1]) թերթից հետևեալ կտորը դուրս բերել, որպէս զի ընթերցողը ըմբռնէ թէ մամուլը, հասարակական կարծիքի առաջնորդը ինչ հասկացողութիւն ունէր բնմի նկատմամբ։

«Առանձար Ամատունի

«Անցեալ չաբաթ երեկոյ Արևելեան թատրոնին մէջ առաջին անգամ ներկայացում տրուեցաւ Առանձար Ամատունի անունով թատերգութիւն մը որ մեծարգոյ Ց. Սվաճեանի հեղինակութիւնն է, թատրոնը մեծ բազմութեամբ լցած էր և ներկայացումն ալ խորին տպաւորութիւն ըրաւ հանդիսականաց վրայ։»

«Առանձար Ամատունի Ցաղկերտի ժամանակ Քաջաջ անուն իշխանի մը մատնութեամբ գերի կիյնայ պարսից ձեռք և կը բանտարկուի. Ցաղկերտի կինը (՞) զայն ազատել կուզէ և անոր հետ կենակցիլ. Առանձար իւր ազատարարին դէմ ապերախտ չը գտնուելու առաքինութեան հետ՝ իւր Աստուծոյն, հայրենեաց և ընտանեաց սիրոյն ալ չը դրժելու արիութիւնը կունենայ, հրաման կը ստանայ թագուհիէն (՞) իւր հայրենիքը դառնալու. Քաջաջ Առանձարի 8 տարեկան որդին իւր քով պահած կը սնուցանէր, Առանձարի կինը իւր որդոյն երեսը տեսնելու համար մուրացիկ չրջելով Քաջաջի դուռը կը գտնէր. Քաջաջ կիմանայ Առանձարի կնոջ ուր ըլլալը և կ'երթայ զանի բռնաբարելու, չը լաջողած կը դառնայ, բայց վրէժխնդրութեան չար ոգւով բռնաբարուած կը համբաւէ. Առանձարի որդին իւր մօրը կը ծանօթանայ, բայց զէշ համբաւոյն համար կը մերժէ զայն. Քաջաջ ուրիշ անգամ ալ նոյն փորձը կընէ և Առանձարի կնոջ գտնուած տեղը

---

[1]) Խմբագիրն էր Ս. Փափազեանց։

կերթալ և առանձին կը գտնէ զայն. կինը մեծ ընդդիմութիւն կը ցուցնէ, տղին որ կը լրտեսէր մայրը (մօրը) վրայ կը հասնի (՛)։ Քաջալ կը փախչի։ Մթութեան մէջ Քաջալ կը հանդիպի Առանձարին՝ որ Պարսկաստանէն կը դառնար. Քաջալ աղքատ Ամատունի մը ձևանալով Առանձարի համակրութիւնը կը ստանայ։ Առանձար իւր ընտանեաց վրայ տեղեկութիւն կը հարցնէ, Քաջալ խիստ դէշ կերպով կը նկարագրէ կնոջ բարքը, մինչև անգամ իւր ութամեայ զաւակն ալ սպանուած կը ցուցնէ. Առանձար կը չփոթի, չուզեր հաւատալ, բայց Քաջալ կը հաստատէ ցուրտ անտարբերութեամբ մը և կնոջ գտնուած տունը կը զեկուցանէ։ Առանձար կերթայ գիշեր ատեն կը մտնէ պատուհանէն ներս, իւր սիրելի թիկնապահն ալ հետը, որ ի միասին բանտարկուած և անոր հետ աղատուած էր, կը տեսնէ իւր կինը, կը ճանաչէ, անոր հետ ալ Երիտասարդ մը որ կը ննջէն։ Առանձար սուրը կը քաշէ, մայրը կ՚արթննայ. «տղա՜» աղաղակելով կը բռնէ տղան։ Առանձար կը չփոթի, և կը լուզուի. խուռն ժողովուրդ ուրախութեան աւետիս կը բերեն թէ Քաջալի վրայ աչտարակ (՞) մը փլչելով զինքը խորտակած տեսեր են և թէ այդ դառն վիճակին մէջ կը մխիթարի եղեր որ նոյն միջոցին Առանձար ալ առանց գիտնալու իւր կինը և որդին պիտի սպաննէ՝ որով ինք վրէժն առած կըլլայ։ Առանձար կը սթափի, խափսած ըլլալը կիմանայ և մխիթարութեամբ կ՚ողջագուրէ իւր կինը և որդին»։

«Այս համառօտ պատմութենէս՝ որ ամեն մասերով ամբողջ չը կրնար համարիլ, կ՚երևայ թէ թատերգութիւնը ինչ կապակցութիւն, դարձուածք (՞) հետաքրքրաշարժ տեսարաններ (՞) լուզմունք տուող և արգահատիչ պատկերներ ունի (՞՞) ասոնց հետ նաև աւելցուր գեղեցիկ լեզուն, իմաստալից խօսքերը, (չէ թէ անհեթեթ բացագանչութիւններ) (՞՞՞) ճշմարիտ աստուածպաշտութեան, հայրենասիրութեան և ընտանեսիրութեան վրայ զմայլելի քացատրութիւնները որոնք բոլոր հանդիսականները դոհ ըրին, և սաստիկ ու տէր ծափահարութեամբ ընդունեցին և զնոյն ինքն հեղինակը կրկին անգամ ի տես հրաւիրեցին։ Ապպիսի թատերգութիւն մը իւր տեսակին մէջ առաջին անգամ է (՞) որ կերևայ այդպիսի հեղինակութեանց թատերաբեմին վրայ։ Կը լուսանք որ ուրիշ անգամ ալ կը ներկայացնի սոյն թատերգութիւնը, և դերասաններէն ոմանք այն անգամ աւելի աղէկ սերտած կըլլան իրենց մասը»։ 1867. յունվարի 14. թիւ 106. «Ժամանակ»։

Այդ միջոցներին Ս. Փափազեանի նման մի խմբագրից սրանից աւելի շնորհքով քննադատական լուսաբանած չէր կարելի սպասել։ Զարմանալին այն է թէ այդ անբովանդակ, աննպատակ և ոչինչ բնականութիւն չունեցող գրուածքին ինչ խօսքերով գովաբանել են։ Հոլի հասկացողութեան չափը եթէ այս լինի հասկանալի է թէ հատինը ինչ կը լինի։ Շատ բնական է որ այս տեսակ ղորմելի խմբագիրներ ոչ թէ թատրոնին կամ դերասա-

նին չեն կարող ուղղութիւն տալ, այլ եղածն էլ կը փչացնեն՝ անգիտակցաբար գովաբանելով կամ պարսաւելով։ Ահա այս տեսակ հողի վերայ էր զարդանում մեր ապագայ զարմացման առարկան, Պետրոս Աղամեան։

Հետաքրքիր է նաև այստեղ լիշել նոյն թուականի լիշնալ թերթի 11 մարտ 110 թուոյն մէջի լուրը. մարտի 7-ին երեքշաբթի օր Նաումի թատրոնում ներկայացրել են Վարդանանց ողբերգութիւնը հեղ. Սկդէֆճեանի ի ներկայութեան անթիւ բազմութեան, նոյն հանդիսի խօսքերով «շատերը կը հաւատային թէ այս տարի և ոչ մէկ թատրոնի մէջ և ոչ մէկ ներկայացման այնչափ բազմութեան եղած է։ Ցիշնալ ներկայացման ժամանակ Վարդանայ որդու դերը կատարել է մեր Աղամեանը։

* * *

Նոր Նախիջևան։—Կ. Պոլսի հայ-դերասանական խումբը որ բացի հայերէնից այն ժամանակներ կը ներկայացնէր երբեմն նաև թուրքերէն (իսկ ալժմ միմիայն թուրքերէն) մենաշնորհ (monopol) էր ցակոբ Վարդովեանի։ Բացի նրանից ոչ ոք իրաւունք չունէր հայերէն կամ թուրքերէն ներկայացումներ տալու։ Այդ էր պատճառը որ Կ. Պոլսում թատրոնի ամենածաղկած ժամանակներն անդամ խումբը մի տեղ էր խաղում, որ քաղաքի դիրքին շատ անլարմար է։ Թէև դերասանները լաճախ հարստահարում էին Վարդովեանից, բայց ստիպուած էին շատ դրկանքների համբերել, որովհետև օրէնքը նրանց ձեռք ու ոտքը չղթայած էր։ Եւ այդ էր պատճառ որ մինչև 50 հոգուց բաղկացած դերասանական խումբը, որի մէջ կային Ֆասուլեաճեանի, Ուշտունու, Նալեանի, Պէնլեանի, Թրենցի պէս ոլժեր մնում էր հաւաքած, առանց ցրելու։ Խմբին ամենքից ազատասէր և անհանդարտ անդամը Թ. Ֆասուլեաճեանն էր, որ միևնոյն ժամանակ խմբի գլխաւոր դրամատիր ոլժն էր։ Օրէնքի հլու հպատակողներից չէր նաև Աղամեան։ Թող որ նա երբէք չէր համաձայնում և չէր խաղում թուրքերէն։ Այս կողմից նա խմբի միակ բացառութիւնն էր։ Շատ անգամներ մի փոքրիկ պատճառ՝ և այլևս Աղամեան չ'կար խմբում։ Վարդովեանի խմբում աւելանում էր դժգոհութիւնները։ Ֆասուլեաճեան մոնչում էր իբրև մի չղթայած առիւծ, և վերջապէս հնարքը գտաւ իւր չղթաները փշրելու։ Նա ծանօթ էր Ռուսաստանի և Կովկասի հայաբնակ կենդրոններին, և արդէն կատարած էր իւր կնոջ հետ մի դերասանական ճանապարհորդութիւն. Վարդովեանից դժգոհ դերասաններից կազմեց իւր խումբը և ճանապարհ ընկաւ դէպի Նոր-Նախիջևան իբր դուտ հայախօս քաղաք 1869-ին։ Նոյն խմբումն էր գտանւում և Աղամեան՝ առաջին սիրահար դերերի համար։ Նախիջևանում Աղամեան տիրապետում էր բնին. համակրութիւն և գնահատութիւն դէպի երիտասարդ տաղանդը հետզհետէ աւելանում էր։ Աղամեան այդտեղ համոզուեց որ «աղէկ կը խաղայ կոր»-ից աւելի մի բան

կայ իր մէջ. նա տեսաւ որ բացի իր ապրած աշխարհից մի այլ աշխարհ կայ և իր տեսած հորիզոնից ուրիշ հորիզոն.

Բայց այդ ամենը երկար չը տեւեց, մի քանի ամիս և ներկայացումները վերջացան։ Խումբի մի մասը վերադարձաւ Պոլիս մի մասն էլ մնաց այնտեղ ճանապարհածախս չ'ունենալու պատճառաւ։ Այդ ակամայ բանտարկեալների թւին էր պատկանում նաև Ադամեան։ Նոյն խմբումն էր և կատակերգակ դերասան Թրեանց (Թուրեան) որ խմբի ցրւելուց յետոյ աւժամանակ հրաժեշտ տալով բեմին ձեռք էր առել ներկարարի վրձինը՝ ասաց ողբերգուին. «եկուր ինձ մօտ, Ադամեան, վրձինս քեզ էլ կ'ապրեցնէ ինձ էլ, Աստուծոյ պարգեւածից քեզ էլ բաժին կը հանենք». դրութիւնը կրիտիկական էր, և հարկ չկար խնդիրքը կրկնել տալու։ Ադամեան ապաստանեցաւ Թրեանցի մօտ։ Այդ ժամանակ իբր ղեստ նորա վերայ մնացած էր իր թատրոնական ֆրակը...։ Բաւական օրեր Ադամեան Թրեանցի տանը բանտարկեալ մնալուց յետոյ ձեռք բերեց ճանապարհածախս և ուղեւորուեց Կ. Պոլիս։

*
* *

Ադամեան Կովկասում և նորա ունեցած ներգործութիւնը Ադամեանի խաղի նկատմամբ.—Ադամեան իր Նոր-Նախիջևան ուղեւորուելուց ճիշտ 10 տարի յետոյ՝ 1879-ին Տիֆլիսում կազմուած թատրոնական մասնաժողովի կողմից հրաւիրուեցաւ Կովկաս։ Այդ տասն տարուայ միջոցին որ նա շատ քիչ անգամ խաղացած էր՝ չէր արել ոչ մի մասնաւոր յառաջադիմութիւն. նա չէր խաղում գլխաւորաբար հայերէն ներկայացումների հաղւագիւտ դառնալու պատճառաւ։ Հետեւաբար 79 թ. մեր տեսած Ադամեանը համարեա 69 թ. Ադամեանն էր։ Բայց այդպէս չ'եղաւ Կովկասում։ Լրագրութիւնը ամբողջ էջեր էր նուիրում թատրոնին, թէև իր խորհուրդներով և քննադատութիւններով երբեմն մոլորեցնում էր դերասաններին, բայց թատրոնի և մասնաւորաբար Ադամեանի խաղի նկատմամբ նորա ունեցած ներդործութիւնը անուրանալի է։ Տիֆլիսի հայ հասարակութիւնը, որի ճաշակը բաւականի զարգացած էր օտարազգի դերասանների խաղի ներքոյ, չէր կարողանում իր ծարաւը լգեցնել տեղական հայ-դերասանական խմբի ներկայացումներից, որոնց մէջ գեղարւեստական համարեա ոչինչ չկար։ Այդ ներկայացումները թէև մասամբ գոհացնում էին ժողովրդեան միջին կամ ստորին դասակարգի պահանջները, բայց զարգացած, տեսած հասարակութիւնը կամ հայոց ներկայացումներին ոտք չէր դնում և կամ գալիս էր ծարաւ, վերադառնում էր պապակած։ Տիֆլիսի թատր. մասնաժողովը լաւ ըմբռնել էր, և այդ էր պատճառը, որ հասարակութեան դեղարւեստական ճաշակին գոհացում տալու համար իր աչքերը դարձրեց դէպի արեւմուտք՝ Կ. Պոլիս։

Բարձրացաւ «Ամէր առանց համարման» ներկայացման վարագոյրը և հասարակութեան աչքերին ներկայացաւ այն՝ որի մասին մինչև այն ժամանակ գաղափար չունէր։ Բացի չնորհալի, գեղարուեստական խաղից՝ հայ լեզուն հնչում էր բեմից մի բոլորովին անծանօթ քաղցրութեամբ և ներդաշնակութեամբ. նա դիւթում էր լսելիքը, նա իբրև կակղեցուցիչ սպեղանի թափւում էր մայրենի լեզուի համար անտարբեր և քարացած սրտերի վերայ և նրանց փափկացնում։ Հասարակութիւնը այդ գիշեր դուրս եկաւ թատրոնից բոլորովին կախարդւած։ Այդ օրւանից հասարակութեան կարծիքը դէպի հայ թատրոնը բարեփոխւաւ էր։ Նա չոչափելի փաստեր էր տեսնում այն կարծիքին թէ՝ մայրենի լեզուով կարելի է ունենալ թատրոն, լսել համամարդկային գաղափարներ, և գոհացնել գեղարուեստական ճաշակ։ Թէև այդ օրւանից ժողովուրդը աւելի պահանջող դարձաւ, բայց այդ իւր կատարեալ գիտակցութեան արդիւնքն էր։ Այս երևոյթը, դէպի առաջ առնւած այս քայլը, շատերի համար, ոչ միայն ինքնակար, այլ չարագուշակ և կործանիչ էր։ Այս այն բուերն էին ասում, որոնք հայ թատրոնը միմիայն իրանց սեփականելու լաւակնութիւնն ունէին։ Նորանց կարծիքով ժողովրդեան աչքը չը պէտք էր բաց անել՝ ցոյց տալով նրան թատրոնը՝ բուն իսկ իւր կոչման մէջ։ Պէտք էր խակ ու փթած մրգով կերակրել նրանց՝ որոնք հասածի և ընտիրի մասին գաղափար չ'ունէին։

Բայց աւելորդ էր վրդովիլը. թատրոնական գործին գլուխ կանգնողները պէտք է գոհացնեն մի զարգացած հասարակութեան թատրոնական ճաշակը։ Ահա գործի բոլոր գաղտնիքը՝ որ այսուհետև միշտ պիտի չաջողի լիուլի կատարելով, իսկ ապարդիւն ու անաջող պիտի մնայ չը կատարելով։

Ադամեան իւր ընկերներով մեծապէս գործակցեցաւ հասարակութեան գեղարուեստական ճաշակի զարգանալուն. բայց նա անպտուղ ծառ չէր, որ միայն իւր տերևներով պարծի և ստւերով բաւականանայ։ Նա օգնեց և օգուեցաւ. սովորեց և սովորեցաւ։ Ինքը քանի անգամներ պատկառանքով խոստովանւել է թէ որքան օգուտ է Տփխիսի թերթերի քննադատութիւններից, և մասնաւորաբար Տփխիսը որքան իւր չառաջադիմութեան պատճառ է եղած՝ գնահատելով, առաջ մղելով և բարձրացնելով իրան։ Բայց Ադամեան ինքը իւր մէջ ունէր չառաջադիմելու բոլոր տարերքը, դորա համար կարօտում էր մի մղիչ ուժի և այդ դտաւ նա թատրոնասէր Տփխիսեցւոց մէջ։ Նորա քայլերը խոշնդոտի առաջ չէին կանգնէր. նորա հալեցաքը սեղմ հորիզոն չէին սիրէր և իւր մտքի թռիչքը սլանում էր միշտ բարձրբարձր։ Իւր լեզուագիտութիւնն էլ օգնում էր չառաջադիմութեանը։ Նա բացի մայրենի լեզուից գրում—կարդում էր ֆրանսերէն, լատիներէն, իտալերէն և վերջերս էլ ռուսերէն [1]), բացի Գրիբոէդովի և այլ մի քանի

---

[1]) Ադամեանի ռուսերէն արտասանութիւնը թէև մաքուր չէր, բայց նա, մանաւանդ իւր Ռուսաստան ճամբորդած ժամանակ լաւ սովորած էր այդ լեզուն.

դալտնի հեղինակներից նա Տփխիսում մտիկ ծանօթացաւ Շէքսպիրի հետ՝ որ իւր ապագայ փառքի պսակը պիտի լինէր։ Նա ըմբռնեց իւր կոչումը, և սկսաւ ամենայն ուշադրութեամբ հետևել մեծ բանաստեղծի ստեղծագործութիւնների ուսումնասիրութեանը։ Նա անդգալի կերպով բայց հաստատ քայլերով յառաջ էր դիմում. նորա համբաւը մամուլի միջոցաւ տարածւեցաւ թէ Կովկասի ամեն կողմը և թէ Ռուսաստան։ 1880 թուականին մի փոքրիկ խմբով նա ճանապարհորդեց Ախալցխա, Ախալքալաք և Աղէքսանդրապօլ, ամեն տեղ իւր տաղանդի վերայ հիացողներ աւելացնելով։ 1881 ին նա այցելեց Գանձակ և Շուշի, որտեղից թռաւ դէպ Ռուսաստան՝ իւր համար պատրաստուած դաշինքը հնձելու։

* * *

Ադամեան Ռուսաստանում։—Տփխիսը Ադամեանի համար հեղաւ այն՝ ինչ որ միջնակարգ դպրոց աւարտողի համար է համալսարանը։ Նա իւր կարողութեան մասին կատարեալ գիտակցութիւն ունէր և այդ պատճառաւ ներկայացաւ աւելի բարձր, մայրաքաղաքի հասարակութեան քննադատութեանը։ Տփխիսեցիք ամեն կերպ քաջալերեցին նորան այդ քայլը անելու։ Սա դժուար և մտածելու կէտ էր։ Ադամեան ռուս հասարակութեան առաջ պիտի ներկայացնէր հայերէն լեզուով։ Ռուսներ պիտի համաձայնէին մի քանի ժամեր նստել թատրոնում և չարունակ լսել մի անծանօթ լեզու՝ որի մասին մինչև այն օր ոչ մի նպաստաւոր դաղափար չունէին։ Բայց ով որ տեսել է բեմի վերայ այդ հսկայ հանճարին՝ նա համոզուած է որ նորան հասկանալու համար պէտք չէ լեզու դիտենալ, նորա դէմքը և աչքերը ամեն ինչ կը հասկացնեն, ամեն ինչ կը բացատրեն։ Ոչինչ հեղինակութիւն չէր կարող ալապիսի գովեստով խօսել տալ մեր լեզուի հնչումների գեղեցկութեան և հարթութեան նկատմամբ, ինչպէս այդ եղաւ Ադամեանի բերնից հայ լեզուն արտասանելով։ Դեռ չը լսած, ծիծաղողներ, ծաղրողներ անչափ էին։ «Հայ լեզո՞ւ...» հարցնում էին զարմացած մարդիկ տեսնելով «Հայլէտ»-ի և «Օթելլո»-ի յայտարարութիւններ։ Բայց երբ վարագոյրը բարձրանում էր և բեմի հերոսը սկսում էր իւր առաջին խօսքերը արտասանել՝ ծաղրն ու ծիծաղը զարմանքի և զարմանքը հիացմունքի էր փոխւում։ «Ոչ թէ մտքով էք զգում նրան, ոչ թէ այն դիտակցութեամբ որ նա ընտիր դերասան է, ասում է „Одесск. Телеграфъ“ թերթի լօգուածագիրը. այլ մի ուրիշ, անիմանալի զգացումով՝ որ կը պարտաւորեցնէ ձեզ կուլ տալ արցունքն, սիրել այդ օտար դէմքը և այդ օտար լեզուն։

---

Թարգմանում էր նրանից բանաստեղծութիւններ. կարդում և հասկանում էր բոլոր հեղինակութիւնները և գրում էր նամակներ նոյն լեզուով։

1883 թ. Մոսկուայի ուսանողներից հրաւիրուելով կը գնայ և դուրս կուգայ «Համլէտ»-ի դերում. նոյն թուին գնաց նաև Նիժնի-Նովգորոդ։ 1884 ին սկսում է խաղալ Պետերբուրգում. «Նովոստ»-ի, «Նովոէ վրէմիա», «Իսկուստվո» և այլ թերթեր միաձայն հռչակում են Աղամեանի դերասանց տաղանդը։ Նոյն տարուայ լուսնիսին Աղամեան գնում է Աստրախան, Ռոստով, Խարկով, և այլն և 1885 թուի մայիսին Կիեվ կրկին և կրկին անգամներ այցելելով Պետերբուրգ և Մոսկուա։ 1886 ին Բաքու և այնտեղից դերասանական խմբից հրաւիրուեցաւ Տփխիս։ Աղամեանի փառքը Տփխիսից էր սկսել. նա թէև չէր սիրում նորան շրջապատող լերկ բլուրները և սահմանափակ հորիզոնը, բայց սիրում էր իբր երկրորդ հայրենիք. նորա սիրտը տրոփում էր քաղաք մտնելիս։ Սկսաւ խաղալ նա իւր նոր ստեղծագործութիւնները. «Օթելլո», «Ուրիէլ Ակոստա» և կատարելագործեալ «Համլէտ»-ը մէկ մէկ նորութիւններ էին որ նա ցոյց էր տալիս մեզ. դարձեալ նոյն ոգևորութիւնը, դարձեալ նոյն խանդաղատանքը դէպի նա։ Վերջացնելով Տփխիսի ներկայացումները և իւր ներկայութեամբ ծնունդ տալով 86—87 տարուայ թատրոնական սեզոնին, ամառուայ ամիսները ճամբորդեց Տփխիսի հայ դերասանների խմբով Վլադիկաւկազ, Մոզդոկ, Պեատիգորսկ, Եկատերինոդար, Թէոդոսիա և այնտեղից Տփխիս՝ ձմեռուայ ներկայացումների համար։ Նոյն ներկայացումների շարքում ներկայացրեց առաջին անգամ «Լիր Արքայի» դերը, որին վերջերս անչափ սիրում էր՝ մինչև գիշերները նորանով զառանցելու աստիճան։ 1887 ին Բաթումից մեկնեցաւ Թէոդոսիա, Սիմֆէրոպոլ, Օդէսա, Քիշնեվ, Պոլտաւա, Մոսկուա, Կազան և այնտեղից իւր ծննդավայրը՝ Կ. Պոլիս։

Այս բոլոր ուղևորութիւնների ժամանակ 1883 թուից մինչև 1888 թ. Աղամեան իւր բոլոր անցած տեղեր թողեց իւր տաղանդի և ընդունակութիւնների վերայ հիացողների ամբաւ բազմութիւն։ Ոսկեղէն, արծաթեղէն, ընծաներ, ուղերձներ համալսարաններից, անթիւ փունջեր ու պսակներ թափւում էին իւր ոտքերի առաջ։ Բոլոր թերթեր զարմանքով խօսում էին այս արտակարգ հայ տաղանդի վերայ։ Շատերն էլ խօսք կամ բառ չէին գտնում իրանց աքանչացումը արտայայտելու։ Նորա խաղը քննադատեցին Ռուսաստանի բոլոր թատրոնական քննադատները, որոնց խօսքի նշանակութիւնը և արհեստի նկատմամբ ունեցած հմտութիւնը և գեղագիտական ճաշակը ընդունուած է հասարակութեան բոլոր դասակարգերից։ Աղամեանին դասեցին մեծ տաղանդների շարքը և աւագութեան աթոռը տուին հայ արուեստագէտին։ Նորա փառքը այնչափ մեծացաւ, որ մինչև զարմանք աղդեց իւր հայրենակից Պոլսեցիներին։ Նոքա այն վաճառականներն էին նմանում, որ իւր անդին զոհարը չնչին գնով ծախելուց լաւ միայն հասկանում է նորա արժէքը։

* * *

Վերջին այցելութիւն ի Կ. Պոլիս և Զմիւռնիա.—1888 թուականի օգոստոսին, Ադամեան վերադարձաւ իւր հայրենիքը ինն ամեայ պանդխտութիւնից յետոյ, պանդխտութիւն՝ որ առիթ տալով նրան կատարելագործել իւր արուեստը, փառքի ամենաբարձր աստիճաններին հասցրել և դափնիներով զարդարել էր իւր ճակատը։ Լրագիրները համակրանքով ողջունեցին մեծ արուեստագէտի վերադարձը, յոյս յայտնելով որ շուտով հայ Համլէտը կարժանանայ բեմի վերայ տեսնելու։

Կազմեցաւ մի խումբ դերասանների և «Օթելլո»-ով Ադամեան սկսեց իւր ներկայացումները։ Հայք և օտարազգիք խռնուած էին «Ֆրանսիական նոր թատրոն»-ի սրահում և հիանում էին Ադամեանի խաղով։ Կ. Պոլսում Օթելլոն հինգ անգամ կրկնուեց։ Կորրադո, Ուրիէլ Ակոստա, Ֆին, միմեանց յաջորդեցին ապշեցնելով հասարակութեան։ Ցոյները համաձայնուեցին Ադամեանի հետ Օթելլո խաղալ, խնդրելով որ ինքը իւր դերը հայերէն արտասանէ, իսկ խումբը յունարէն։ Ցոյների նման դասող աղգի կողմից այս գիջողութիւնը նշան է Ադամեանի բարձր հանճարին որի առաջ ամէն գլուխ խոնարհում էր կամայ ակամայ։

Աւելորդ չէ լիշել «Կորրադո» ներկայացման ժամանակ տեղի ունեցած մի դէպք։ Վերջին արարածին, Կորրադոի սարսափելի զոհաբերութեան ժամուն, երբ նա տառապում է օրհասականի տանջանքով, օր. Աղնիւ, որ Էմմայի դերն էր խաղում (տասը տարուայ դրամատիքական դերասանուհի) երբ տեսաւ Կորրադոի ցաւերը, տեսաւ որ այդ մարդը որից առաջ վախում էր իսկ վերջերը համակրում, իրանից երկու քայլ հեռու անշնչանում է, վայր ընկաւ ուշադնաց։ Վարագուրը իջաւ։ Շատ կենդանի կերպով պատկերանում է աչքիս խեղճ Ադամեանի չփոթմունքը։ Ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում թատերասրահի կողմը, որ թնդում էր անվերջանալի ծափահարութիւններով։ Ամենքի ուշադրութիւնը օր. Աղնիւի վերայ էր։ Ադամեան ինքը դրկած անբարբառ դերասանուհուն, բոլոր ձայնով «բժիշկ բերէք» «օգը կոլոն» «ամէր» գոչում էր։ Տասը վայրկեանից հաղիւ ուշքի եկաւ դերասանուհին՝ ուխտելով որ այլ ևս Էմմայի դերը չի կատարէ։

Նոյն թուականի դեկտ. 30-ին կատարուեց նոյն թատրոնում հռչակաւոր ողբերգուի 25 ամեայ բեմական գործունէութեան յոբելեանը։ Դա Կ. Պոլսում կատարուող առաջին յոբելեանի հանդէսն էր։ Դորա համար կազմեցաւ առանձին մասնաժողով, որի անդամների անունը երաչխաւոր է թէ Ադամեանի տաղանդը ինչ աղդեցութիւն էր ունեցել իւր հայրենակիցների վերայ։ Այդ անունները, փոքրաթիւ բացառութեամբ, ոչ թատրոնական գործի մէջ մտել էին, և ոչ էլ կը համաձայնուէին մտնել, բայց Ադամեանի տաղանդը, որով դերասանական արուեստը այնչափ բարձրացած էր, շատ հրաչքներ կարող էր գործել։ Յորելեանի մասնաժողովի անդամներն էին պ. պ. Ներսէս Ներսեսեան. Կ. Ալամեան, Մինաս Զարաղ. Մ/-բայէլ Փորխուքալ, Ասպիտ Զունդ, Պ. Ապուլլան. Թումաս Էրզեան, Սրա-

պիսն Հէքիմեան, և Վասիլեան։ Հակառակ մի քանի բարեկամների խորհուրդների, Ադամեան չտապեց իւր լօբելեանի կատարումը, միջոց չը տալով՝ որ գոնէ երկու ամիս լայտարարուի, որով Կովկաս և Ռուսաստան, Ադամեանի հանճարին հիացող այդ երկիրները չը կարողացան պատշաճաւոր կերպով՝ մասնակցել լօբելեանին, որով անչափ պիտի աւելանար այդ հանդիսի շքեղութիւնը [1]։

Նոյն մարդիկ, որոնք նախանձից դրդուած, մի դերասանի լօբելեանի կատարելու չը լսած տօնախմբութեան վերայ սկսան զարմանալ։ Այդ մարդոց հասկացնելու համար օտարների մէջ Ադամեանի վայելած փառքը, հարկ եղաւ «քսան և հինգ ամեայ բնական գործունէութիւն Պ. Հ. Ադամեանի» անունով մի բրոշիւր հրատարակել (պ. Յօնապետեան) որը բացի համառօտ կենսագրութիւնից պարունակում էր Ռուսաստանի նշանաւոր թերթերի Ադամեանի մասին գրածներից հատուածներ։ Բայց դորանով ոչ թէ չար լեզուները լռեցին, այլ այդ բրոշիւրը մի տեսակ զէնք եղաւ նրանց ձեռքում, որովհետև սկսեցին միամիտներին հաւատացնել թէ «իրանք լաւ գիտէին, որ Ռուսաստանի թերթում Ադամեանի մասին ադդիսի բաներ գրուած չկայ և թէ դրանք շինծու են»։ Նոյն իսկ իւր արուեստակից ընկերներից շատերը հաւատացնում էին թէ «ինչ նրա բանն է Օթէլլո խաղալ...»։ ահա որ աստիճան նախանձը կուրացնում է մարդոց։

Ադամեան Կ. Պոլսում, բեմի վերայ երևալով, մամուլի մէջ մի նորութիւն ևս մտցնելու առիթ տուաւ։ Մեր խօսքը մինչև այն ժամանակ համարեա Կ. Պոլսեցւոց անծանօթ մի չարք լուրջ քննադատութիւնների մասին է, որ Ադամեանի ներկայացումների մասին պարբերաբար հրատարակւում էր։ Այդ քննադատութիւններում քսան տարի առաջ կրկնւող «աղուոր կը խաղայ կոր» ից աւելի աչքի ընկնող կէտեր կար։

Հակառակ մեծ ջանքերի Ադամեան Կ. Պոլսում չը կարողացաւ ներկայացնել «Հաւլէտ» և «Լիր Արքայ» ողբերգութիւնները։ Որովհետև տեղական գրաքննութիւնը արգիլեց առարկելով այդ ողբերգութիւնների գործող անձինքների մէջ թագաւորների գոյութիւնը. և որովհետև Ստամբօլում մի թագաւոր կայ, հետևաբար չէ կարելի թոյլատրել երկրորդ թագաւորի գոյութիւնը՝ թէկուզ այդ թագաւորը բեմի վերայ լինի։

---

[1]) Ադամեանի յօբելեանին մի դէպք պատահեցաւ, որ նորան զաւակական վիշտ և բարկութիւն պատճառեց։ Պսակի խնդիրն էր այդ։ Յօբելեաբին պսակ էր տրուած 170 դուրուշ արժողութեամբ (մօտ 14 բուբլի) և այդ դումարը մոցրել էին ծախսերի բաժնում։ Եւ իսկապէս զայրանալու կամ վշտանալու աւելի էր սա։ Բայց այդ անողները, կամ աւելի ճիշդը անողը (մենք կասպասենք դիտենք որ յօբելեանի մասնաժողովի անդամների եթէ ոչ բոլորը, գոնէ մեծ մասը անտեղեակ էին այս դէպքին) ժամանակին մի փոքրիկ վէճի պատճառաւ Ադամեանից նեղացած լինելով, սրանով կամեցել էր իւր վրէժը լուծել։ Արդարև Ադամեանի նման մի դերասանից վրէժ լուծելու շատ ստոր, անազնիւ և անպատուաբեր միջոց՝ որի արաւը մրոտեց մի ամբողջ անմեղ հասարակութեան պատիւը։

1889 թուականի գարնան Ադամեան տեղական երիտասարդութիւնից հրաւիրեցաւ Զմիւռնիա. հետզհետէ ներկայացրեց իւր գլխաւոր ռէպերտուարը ինչպէս և «Համլէտ» բացի «Վիր Արքայ»-ից։ Հասարակութեան բոլոր դասակարգերը եռանդուն ընդունելութիւն արեցին։ Մանաւանդ իւր տեսակում միակն էր մանկական պարտէզի ծաղիկների մեծ արուեստագէտին արած ընդունելութիւնը։ Նոքա չնորհակալութիւն չալտնեցին մի ուղերձով՝ որ այդ մեծ դերասանը կամեցաւ փոքրիկների ընկերակցութիւնը վայելել։ Երգեցին, խաղացին, արտասանեցին և նրան մի ծաղկափունջ մատուցանելով անունը ստորագրել տուեցին այցելուների տետրակում։ Ես երբէք Ադամեանին այնպէս զարթ տրամադրութեան մէջ չէի տեսել, ինչպէս Զմիւռնիայի մանկական պարտէզում անցկացրած ժամերի միջոցին։ Նա մանուկներին բաժնեց իւր պատկերներից և չաքարեղէն։

Իւր ի նպաստ տրուող «Համլէտ» ներկայացմանը ի միջի այլոց պսակ տուեց հիւրանոցի ծառան, որ պաշտօնաթող մի Սերբ սպայ էր։

Նորա կոկորդի հիւանդութիւն ունենալու լուրը թէև Պօլսում եղած ժամանակ տարածած էր [1]), բայց ինքը շատ չնչին բան էր կարծում, որին չափազանց նշանակութիւն էին տալիս, բայց նա իւր այս կարծիքը ունենալով հանդերձ լրջօրէն հետևում էր հիւանդութեան բժշկութեան։ Նորան իւր այս կարծիքում աչխատում էին համոզել բոլոր բարեկամները։ Եթէ նա իմանար այդ հիւանդութեան չափազանց վտանգը, էլ այնուհետև Նորա մտածմունքը նոյն իսկ կարող էր նրան գերեզման իջեցնել։

«Օթէլլո» փորձելիս նա գանգատւում էր իւր ձայնի թուլութիւնից, և ապա սկսում էր բնական կերպով դոռալ, ներկայացնելով Օթէլլոի այն տեսարանը երբ նա մահճից վեր թռած գալիս է Մօնթանոի և Կասսիոյի մենամարտութիւնը ընդհատելու։ Հակառակ Նորա պնդելուն ես ոչինչ ձայնի տկարութիւն չէի նշմարում։ Բայց երբ ներկայացրուց «Ռին» ը, որին

---

[1]) Ադամեանի կոկորդի հիւանդութիւնը առաջին անդամ յայտնուել էր 1888 թ. Զմրան Մօսկվայում, բայց շուտով անց էր կացել։ Նոյնը կրկնուեց Կ. Պօլսում յաջորդ տարուայ գարնան երբ ինքը պէտք մասնակցէր բարեգործական նպատակով Բեբայում տրուող մի հանդէսի։ Վաղօրոք արդէն յայտարարուած էր այդ հանդէսին Ադամեանի մասնակցութիւնը։ Ուռնուած ամբոխը սպասում էր Նորա դուրս գալուն, բայց չը կար Ադամեան։ Վերջապէս երևեցաւ. ամեն ոք սրեց իւր լսելիքը։

«Հարցրին մի անդամ Մեծն Նապոլէոնին, սկսեց խօսել Ադամեան տկար ձայնով, թէ ի՞նչ է պէտք կանոնաւոր պատերազմ մղելու համար։

—«Ներք դլխաւոր բան, պատասխանեց Նապոլէօն, առաջին դրամ, երկրորդ դրամ, երրորդ դրամ։

«Ինչ ես հարցնում եմ Ձեզ, դիտէք ինչ է հարկաւոր դերասանին իւր պաշտօնը խղճի մտաք կատարելու համար։ Նոյնպէս երեք բան, առաջին ձայն, երկրորդ ձայն, երրորդ ձայն։

Վարագոյրը ընկաւ։ Ադամեանի խօսքերին հետևեց բուռն ծափահարութիւն։

—«Կենդծում էր ասում էլն հանդիսականներից շատերը։

Նա աննման էր խաղում, երևում էր որ նա բեմի վերայ տանջվում է. ամեն բոպէ սպասում էի որ ձայնը պիտի ընդհատուի։ Նա համարեա չէր խաղում, այլ խօսում էր կամաց, բոլոր ուժը պահելով վերջին արարածի խելագարութեան տեսարանին։ Բայց զուր էր ամեն ջանք, հիւանդութիւնը կատարելապէս տիրում էր նրան։ Փոխանակ մշակուած, ներդաշնակ ձայնի լսում էր խուլ հնչիւններ։ Այդ երեկոյեան նման ձախորդ խաղ առաջին անգամ էի տեսնում որ Ադամեան խաղայ։ Ինչպէս վարադոյրը։ Ադամեան լուսահատած դէն շպրտեց սուրը, որով սպառնում էր լորդ Մէնվիլին, գլուխը սկսեց խփել պատերին և փետել մազերը։ Նա այլ ևս իւր անձի տէրը չէր։ Ադամեան, ինչպէս և ամեն մի ճշմարիտ տաղանդաւոր դերասան, քաջ զգում էր իւր խաղի բոլոր թուլութիւնը և անկարողութիւնը։ Սրբ հանդարտեցնելու համար մտաբ իւր սենեակը, ընկաւ կրծքիս վերայ, լալիս էր բարձրաձայն և կրկնում. «Նզբայր Վրոյր, ինչ պիտի ընեմ ես... ինչ պիտի լինի իմ պատիւս, իմ անունս, իմ ապրուստս...»։ «Դա ոչինչ բան է», «կանց կենայ», «կը բժշկի» և այլն. այս սովորական բառերը այնքան արտասանել էինք, որ բոլորովին կորցրին իրանց նշանակութիւնը. Նա հետզհետէ իմանում էր իւր հիւանդութեան բոլոր ծանրութիւնը։

Միևնոյն ձախորդութեամբ և բնական դրամայով վերջացաւ «Կօրրադո» դրաման։ Նոյն լացն ու ողբը, նոյն սպանիչ լուսահասութիւնը։ Նա դպում էր որ հիւանդութեան ժանիքը սեղմած իւր կոկորդին, քարշում է, ուզում է դլորել իրան փառքի այն բարձրութիւնից՝ որտեղ կանգնած է ինքը։

Ադամեանի գեղեցիկ խաղը իւր ընտիր ռէպէրտուարում վերջին անդամ տեսնելը Զմիւռնիային վիճակուած էր։ Ադամեան վերջին անդամ արտասանում էր այդ քաղաքում Օթելլո, Ռին, Կօրրադո, և իւր նպաստ վերջին ներկայացումը, վերջին Համլէտը։ Նա հետզհետէ հրաժեշտ էր տալիս այն անմահ ստեղծագործութիւններին, որոնց այնքան դեղարուեստօրէն և բնական կերպով պատկերացնում էր, և որոնք սպառեցին իւր անկին կեանքը։

Զմիւռնիայից Աթէնքի լուսաց լրագիրների թղթակիցները արդէն լուր էին հաղորդել թէ հռչակաւոր հայ ողբերգու Ադամեան այցելելու է Աթէնք, որտեղից մտադիր էր շարունակել իւր ճանապարհը դէպի Եւրոպայի մայրաքաղաքները բայց հիւանդութեան ծանրութիւնը ստիպեց չուտով Կ. Պոլիս վերադառնալ։

Ոչ այնքան ուրախ էր Ադամեան երբ չոգենաւ նստեց. կարծես զգում էր որ դէպի մահ է դիմում, դնում է իւր ծննդավայրը երկու տարի էլ տանջվելու, մեռնելու և խաղալու։

Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ խաղաց մի-երկու երկրորդական դրամաներում, որոնց վերջինն էր «Սէր առանց համարման»։ Այն պիէսան, որը Տիխիսում բացաւ նորան փառքի դռները, նոյն պիէսան փակեց նորա դերասանական փառաւոր գործունէութիւնը։

* * *

*Հիւանդութիւն և վերջին օրեր։*—1889 թ. յունիսին Աղամեան Կ. Պոլիս դառնալով, համարեա միշտ զբաղուած էր կոկորդը տանջող հիւանդութեամբ. նորա ձայնը որ երբեմն կտրում էր և երբեմն բացւում բոլորովին կտրած էր։ Իսկ նոյն թուականի ձմրան իւր ցաւերի վերայ աւելացաւ յօդացաւ ևս, այնպէս որ նա անկողնում ստիպուած բոլորովին անշարժ պէտք է պառկէր, մի փոքրիկ շարժում և կը տանջուէր անենկարգրելի ցաւերով։ Թէ ինչ խստապահանջ և նեղսիրտ էր Աղամեան իւր հիւանդութեան միջոցին, այդ քաջ գիտեն նրանք, որ մօտիկ ծանօթ են եղած հանգուցեալ արուեստագէտին։ Մի չնչին սխալ, մի ծուռ քայլ կամ մի աւելորդ բառ բաւական էր նրան վրդովելու։ Իւր ամենաթեթև տկարութեան ժամանակ պատահողն անդամ անկարելի էր որ չը լիչէր Մոլիէրի «Արհակալական հիւանդը»։ անմիջապէս բժիշկներով ինքն իրան կը շրջապատէր, և դեղահատերի կամ դեղափոշիների ընդունելութեան ժամերը բոպէներով և վայրկեաններով էր զործադրում։ Վերջի յօդացաւի մասին իրան հետ անձամբ խօսելիս նա ներկայացնելով իրանց տան Ցակոբ անունով ծառան՝ մեծ շնորհակալութիւն և երախտիք յայտնեց իւր վերայ ունեցած խնամքի համար [1]։ Դեռ 1890 թուականի գարնան, բացի իւր կտրուած ձայնից ոչինչ հիւանդութեան նշան չէր երևում նորա վերայ։ դէմքը մի փոքր նիհարած էր, իսկ ծնօտը պատած մի փոքրիկ սիրուն միրուքով։ Վերջին տեսութեանս միջոցին գոչեց.

—Նրանի՞ քեզ, որ Տփխիս ես գնում,

—Դնանք միասին, պ. Աղամեան։

—Ո՛չ, դու գնա. առաջիկայ գարնան էլ ես ճանապարհ կընկնեմ։

Գարնան վերջանալուն հետ իւր արգասաւոր կեանքն էլ ցամքեցաւ։ Իւր սրտակից Աղէք. Ստեփանեանցի դրած նամակներում շարունակ լիչում է բժշկուելու համար գարնան Իտալիա գնալու մտադրութիւնը։ Զը նայելով հիւանդութեան ճնշման տակ օրից օր տկարանալուն՝ նա մինչև վերջ պահեց իւր բժշկուելու յոյսը. նա զարնուրում, դողում էր մահից։ Սովորական խօսակցութիւնների մէջ նա յաճախ խօսում էր իւր ծերութեան մասին, որի սանդուղքների վերայ շուտով ոտք էր դնելու։

—Ես չը պիտի լինեմ այն ծերունիներից, որոնք իրանց դէմքի վերայ և առօրեայ կեանքում ցոյց են տալիս որ ընկճւում են տարիների բեռան տակ. ես պիտի լինեմ առոյգ, կայտառ և աշխոյժ։

---

[1]) Աղամեան աւհասարակ առանձին սէր ցոյց կուտար դէպի իւր ծառաները։ Նա դովելով նոցա կը ներկայացնէր իւր բարեկամներին։ Ցակոբի նման գովեստով կը խօսէր իւր շուշեցի Պողոս ծառայի և Ղազար Մամուկեանի մասին։ Վերջինս որ Մոզոռքից վերցրեց 1886 թ. շարունակ երկու տարի մնաց էր։

Այս խօսքերը ասելուց յետոյ իբր կենդանի օրինակ աչխոյժ ծերութեան ցոյց էր տալիս փողոցից անցնող մի առոյգ և կալտառ ծերունի։ Շատ անգամ էլ մատիտով նկարում էր թէ ինքը ծերութեան ժամանակ ինչ դէմքի փոփոխութիւն պիտի կրէ։

Բայց զգաց որ տան մէջ իւր բժշկութիւնը, եթէ ոչ անկարելի, գոնէ դժուար է։ Բոսֆորի վերին մասում, Պէօյիւք-դէրէում, ուր երկու ժամումն է գնում չոգենաւը, մեծ դժուարութիւն է բժիշկների երթևեկութիւնը, ուստի լսելով բարեկամների խորհուրդին՝ որոշեց գնալ հիւանդանոց, և իբր իրան ծանօթ ազգութեան ընտրեց ռուսաց հիւանդանոցը, որի գլխաւոր կառավարիչները, ծանօթ մեծ արուեստագէտի իրանց հայրենիքում վայելած փառքին ու համբաւին՝ առանձին ուշադրութիւն դարձրին նորա վերայ։

Որպէս զի Ադամեանի վիճակի վերայ աւելի մօտիկ տեղեկանանք, աւելորդ չէ մէջ բերել նորա երկու նամակները, մէկը ամբողջապէս, իսկ միւսի մի մասը՝ որ վերաբերում է իւր հիւանդութեան վիճակին։ Այդ նամակները ուղղուած են Տֆխիսի միակ բարեկամին, որին հանդուցեալը իւր «Հօրացիո»-ն էր կոչում, և որը բարեսիրաբար յանձնեց մեզ հրատարակութեան։

«19 յունուար. 1891 թ. կ. Պ. Պէօյիւք տէրէ.

Պատուական և սիրելիդ իմ Սանդրօ.

«Ներէ ինձ, որ այսքան ուշ բարեմաղթում եմ քեզ Նոր-Տարին, բայց բաւական է որ 'ի սրտէ կը ցանկամ քեզ համար լաւագոյն և բարեբաստիկ օրեր, ուրեմն փոքր ինչ ուշանալը չի վնասեր. արդէն դա մի սովորութիւն են արած մարդիկ միմեանց բարեմաղթութիւններ անել նոր տարուայ առթիւ և այդ բարեմաղթութեանց մէջ աւելի լեղուներն են խօսում քան սրտերը։ Ինձ որ միայն ոչ միայն կը ցանկամ քեզ համար ամեն նոր տարին բարեբաստիկ, այլ մինչև անգամ կենացդ ամեն նոր օրերը, բերելով քեզ նոր ուրախութիւն և նոր յաջողութիւններ, բայց պիտի ասես թէ դժբաղդաբար այնպէս չէ լինում, սակայն փոյթ չէ, դու քո վշտաց մէջ հաւատա, աւելի սիրելի ես Աստուծոյ քան շատեր իրանց բուրլիների ղէդին մէջ։ Մի մոռնար Քրիստոսի ասածը. «ամբարշտաց յաջողեսցի ի վերայ երկրի»։ Մի մեծ իտալացի բանաստեղծ փիլիսոփայ Տանդէ Ալիկիէռի ասում է թէ «հաղար հաճոյք մի վիշտ չեն արժէր» քիչ շատ համբերութեամբ տարուած վիշտը մեզ Աստուծոյ է մօտեցնում։ Նոքա որ մեծ վշտեր ունին, երջանիկ են մի փոքր ուրախութեամբ էլ։ Աստուած աւելի որոշ կը տեսնէ նրանց՝ որոնք որ անտես են թողուած մարդկներից, սակայն ովկիանոսի մէջ մարգարիտը, ժայռերի ծոցին մէջ թաղուած ադամանդը ծածկուած են թէպէտ մարդերից, բայց որոշ կը փայլին ստեղծողին աչացն յանդիման։ Ինչպէս դու, իմ թանկագին հերոս, որ ծածկուած ես աղքատութեանդ քողին տակ, բայց լիշէ որ կայ մի աչք քեզ տեսնող և այդ

աչքից պիտի ծագէ մի օր հոգոյդ լոյս և մխիթարութիւն և այս իմ սասա-ները փորձով գիտեմ։ Դու ուրախացիր որ ունիս հոգուդ և սրտի հարբ-տութիւն և ցաւէ նոցա վերայ որք աղքատ են այն կողմից, դի այդ է ճշմարիտ աղքատութիւնը»։

«Ինչպէս որ երևում է Կոխի դրութիւնը անլաջող են գտնում բժիշկ-ները և դեռ չեն համարձակում բացարձակ կերպով ներարկել հիւանդնե-րին, որովհետև փոխանակ բժշկելու կամ սպանում է և կամ մի նոր տարօրինակ հիւանդութիւն է լուսաջ բերում։ Ուստի իմ բժիշկն էլ չէ ու-զում իմ վրայ փորձել, դորա փոխարէն տալիս է մի դեղ, որից ընդունում եմ օրը 6 չայի դդալ, մեծ նեղութեամբ և որի մէջ քրէօղօթ կայ, և որ սաստիկ այրում է կոկորդս ե բերանս։ Սակայն ինչպէս երևում է սորա-նից օգուտ պիտի տեսնեմ, որովհետև վէրքը փոքր ինչ մեղմացած է թուում։ Սակայն սաստիկ ձմեռն ու ցուրտը որ տիրում են այստեղ՝ դանդաղեցնում է իմ բժշկութիւնը։ Երևակայէ, ես որ սիրում էի նստել, խօսել բարեկա-մաց ընկերութեան մէջ, այժմ ոչ ընկերութիւն ունիմ մօտս, և ոչ ձայն. թէ լեզուս միայն շարժել կամենամ՝ սաստիկ ցաւ կզգամ, վերջապէս կեանքս անցնում է առանձինն, տխուր, միօրինակ, անձայն և անդրաժ...

«Մեծ է լոյս և հաւատքս առ Աստուած, որով կարողանում եմ դիմա-նալ իմ այս ցաւալի վիճակին, և լուսալ որ մի օր պիտի կարողանամ գրկել և համբուրել դքեզ գրկին»։

«22 փետրուար, 1891 թ. Կ. Պ. Բերա, Նշան-թաշ.

. . . . . .

«Հիմայ, որ գտնուում եմ ռուսաց սուրբ Նիկողայոսեան հիւանդանո-ցում, շատ աւելի լաւ եմ զգում ինձ։ Օրը երեք անգամ ընդունում եմ բժիշկների այցելութիւնը, մանաւանդ բուն իմ մասնագէտ բժիշկս, Մի-խայիլ Օսիպովիչ Պլէսկով, լիովին լոյս է տալիս բժշկել ինձ. արդէն ամեն-օրեայ կատարած վիրաբուժական գործողութիւններից մեղմացել է կոկոր-դիս ցաւը, փառք Աստուծոյ»...

«Սրտիդ խռովութիւնը թող այլ ևս հանդարտի, կարծեմ որ պիտի կարողանամ կրկին տեսնել, գրկել զքեզ»։

Զը նայելով իր արտակարգ համբերութեան, որով նա ընդունում էր իր վերայ կատարած անտանելի վերաբուժական [1]) գործողութիւնները և տրուած դեղերը, հիւանդութիւնը հետզհետէ սաստկանում էր։ Բաւական չէր կոկորդի տանջանքը, թոքախտն էլ միւս կողմից աւերում էր նորա մարմինը։ Տեսնելով նորա հիւանդութեան ծանր կերպարանք ստանալը ապրիլի կէսին փոխադրեցին նրան Կրկին Պէօլիւք-դէրէ։ Այդտեղից Աղա-

[1]) Վիրաբուժական գործողութիւնները կատարում էին Աղամեանի կոկոր-դում դուրս ելած ուռոյցները դաղելու կամ կարելով ոչնչացնելու համար, որ մի կողմից նորից էր գոյանում։

մեան իւր վերջին երկու նամակները գրկեց 'ի Կովկաս, մէկը իւր բարեկամին, միւսը «Մշակ»-ում տպելու՝ շնորհակալութեան համար. այս մասին իւր բարեկամին գրում է թէ այդ նամակը հազիւ կարողացել է երեք օրում գրել։

Թէև օրից օր տկարանում և մօտենում էր գերեզմանին, բայց նա մինչև վերջին րոպէն յալտնի ոչինչ չասաց իւր մահուան մասին։ «Ես օդափոխութեան պիտի գնայի, ասում էր հիւանդը մահուանից մի քանի օր առաջ, մինչդեռ սենեակէս դուրս չեմ կարող ելլել... քոյրիկ, եթէ ուսիոյ բարեկամներս գիտենան թէ ես օդափոխութեան կը փափաքիմ, վայրկեան մը զիս հոս չեն ձդեր»։

Պէշիկթաշլեան գրում էր իւր մահուան անկողնից թէ «երկար տեսեց այս ողբերգութիւնը, արդեօք Երբ պիտի իմնէ վերջին վարագուրը»։ Բայց Ադամեան որքան էլ մտածէր, աշխատում էր այդ մտածութիւնը վանել իւր ուղեղից. նա իբրև մահից զարհուրող մարդ՝ չը համարձակեցաւ իւր մտածութիւնը դրի առնել, կամ մինչև իսկ իւր մահուան կարելիութեան մասին երկու խօսք ասել։ Դեռ հիւանդութիւնից մի քանի օր առաջ թախանձելով հարցնում էր իւր բժշկին թէ պիտի կարողանայ բժշկուել։ Ադամեան, որ ինքն իրան համարեա բժիշկներին էր լանձնած և լուիկ կատարում էր նոցա անտանելի հրամանները, և որոնց վերայ նա անչափ հաւատք ունէր, վերջերս բոլորովին մերժել էր այդ սարսափելի գործողութիւնները, որոնք առ. ոչինչ համարելով կրկնակի հիւանդութիւններով տառապող թշուառ հիւանդի վիճակը, ուզում էին իրանց փորձերը շարունակել նորա դիակի վերայ անդամ։

Թէև լունիսի 2-ն էր, մահուան նախորդ օրը բայց Ադամեանի ապրելու լոյսը դեռ վառ էր։

—Տիւրիւկա քոյրիկ [2]). մի վախնար, ասում էր հիւանդը հազիւ լսելի ձայնով իւր լուսահատ քրոջը, ես քեզի համար աղէկ պիտի ըլլամ... քնանալ կուզեմ...

—Մի՛ նեղւիր, քնացիր։

—Քնանալ... երբէք, երբէք... դու քովս նստիր. եթէ քնանամ հեռացիր։

Ադամեան իւր պառկած տեղում շատ լաճախ արտասանում էր Համլէտ, Օթելլո և Լիր ողբերգութիւններից. թռչում, սլանում էր հոգւով գէպի Թատերաբեմ, հագնւում և երևում էր իրան անհամբեր սպասող հասարակութեան, ընդունում էր նոցա պսակները, և իւր երևութը ողջունում էր որոտացող ծափահարութեամբ։

Ադամեան իւր մահճի մէջ առաւել ղդաց թէ որքան մարդիկ կան

---

[2]) Վերջին ժամերում Ադամեանի խօսքերը դուրս լերուած են իւր քեռայրը ս. Թաշճեանի նամակից։

Կովկասում և Ռուսաստանում իւր վերայ մտածող և որքան սրտեր թռթռում են իրա համար։ Նա կարելի եղած չնորհակալութիւնը ցատնեց իւր կրկնակի նամակներով, և իւր մտիկ բարեկամների անունները շարունակ լսում էին իւր բերանից։

Զարաբաստիկ օրեր էին լուսանում Ադամեանի սրտակիցների և դնահատողների համար. մեծ դերասանը չափազանց դրաղուած էր մտքով և քուրը նկատելով նորա այդ մտածողութիւնը հարցրեց.

—Ինչ կայ որ այդչափ կը խորհիս։

—Ոչինչ, եթէ գիտենաս Տիւրիւկա թէ ինչ կը խորհիմ, գոհ չես ըլլար։

Նա իւր մահուան կարելիութեան մասին էր խորհում։

Վերջին օրայ վերջին ժամերն էին, Մոսկէս գերապատուոյ կը կարդար իւր աղօթքները, բայց հիւանդը հաղիւ կը լսէր դրանց, նա մտքով սլանում էր, հոգւով փոխադրում էր մի այլ աշխարհ. «այն անքննելի աշխարհը, որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել»։ Նա հանդստացրուց խռոված գերապատուին և դրկեց, բռնեց իւր հօրեղբօրորդու ձեռքը, նայեց նրան հանգած աչքերով, ուզում էր խօսել, բայց լսեցաւ միայն խռպոտ հաղագներ և... մեռած էր։

(կը շարունակի)